Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-813 [3]-11.06.2015-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-18-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) ջրային ոլորտը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում օրենքի պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>>, <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին>>, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին>>, <<Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> և <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված կարծիքների ամփոփման վերաբերյալ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուզաննա Մուրադյան	<<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծում առաջարկվող Հոդված 22-ի <<Սակագների ձևավորման սկզբունքներ>> կետի 2-րդ ենթակետում շարադրված <<ողջամիտ շահույթի>> բառակապակցությունում հասկանալի չէ, թե որն է ողջամիտ շահույթի չափը: Առաջարկում եմ սահմանել շահույթի առավելագույն և նվազագույն և նվազագույն թույլատրելի շեմ:	Ներկայացվում է համապատասխան մեկնաբանություն:	Նշված հասկացությունը վերցված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից և հանրային ծառայությունները կարգավորող այլ օրենքներից: Շահույթի առավելագույն և նվազագույն թույլատրելի շեմերի սահմանելն օրենքով նպատակահարմար չէ՝ հաշվի առնելով ոլորտային առանձնահատկությունները և հանրապետությունում ըստ ոլորտների ձևավորվող շահույթի միջին նորմաները:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Հովհաննես Սահակյան	1. Նախագծով խմբագրված՝ ՀՀ ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ 1-ին մասի 3-րդ կետով Կարգավորման հանձնաժողովի կողմից լիցենզավորված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացման ձևերը հստակեցնել: Դա հնարավորություն կտա տեղում ստուգումների կամ փաստաթղթային վերահսկողության միջոցով և դրա արդյունքներով Հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի, լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Օրենսգրքով սահմանված պահանջների խախտումների բացահայտման դեպքերում կիրառել Նախագծի 47.1 հոդվածով սահմանված տուժանքները: Միաժամանակ առաջարկում եմ նույն կետում <<սույն>> բառից հետո <<օրենքով>> բառը փոխարնել <<օրենսգրքով>> բառով: 2. Նախագծով խմբագրված՝ Օրենգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետյալ խմբագրությամբ. <<ջրամատակարարման	Ներկայացվում է համապատասխան մեկնաբանություն: Ընդունվել է:	Վերահսկողությունը կիրականացվի՝ հաշվի առնելով <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքներին, սույն օրենսգրքին ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված մոնիտորինգի կարգի դրույթներին համապատասխան: Համապատասխան խմբագրումը կատարվել է:

		կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում իրականացնել լիցենզավորում սույն օրենսգրքին համապատասխան իր կողմից հաստատված լիցենզավորման կարգի համաձայն,>>: 3. Նախագծով խմբագրված՝ Օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասում ջրի մեծածախ վաճառքի դեպքում օրենսգրով սահմանել դրույթները, որոնց առկայության դեպքում միայն լիցենզավորված անձն իրավասու կլինի իրականացնել այն: 4. Նախագծով խմբագրված՝ Օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասում փակագծում նշված <<ՁՕԸ-երին>> հապավումը փոխարինել <<Ջրօգտագործողների ընկերությունների>>, իսկ <<ՁՕՄ-երին>> հապավումը՝ <<Ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին>> բառերով: 5. Նախագծով խմբագրված Օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասում հստակ սահմանել, թե ի՞նչ որոշում է ընդունում Հանձնաժողովը: 6. Նախագծով խմբագրված Օրենսգրքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում <<անձի կամ>> բառերը հանել, քանի որ նշված տնօրինման իրավազորության և սեփականության հետ կապված հարցը կարգավորված է նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<մասնավոր կառավարման պայմանագրով>> բառերը փոխարինել <<պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի արդյունավետ կառավարման պայմանագրերով>> բառերով: 7. Նախագծով խմբագրված Օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված <<ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն>> հասկացության բովանդակությունը ամրագրել Օրենսգրքի 1-ին հոդվածում, ինչպես օրինակ <<էներգետիկայի մասին>> ՀՀ օրենքում է: 8. Նախագծով լրացվող 5.1 գլխի 47.1 հոդվածի 1-մասում՝ 8.1 Սահմանել թե ի՞նչ հերթականությամբ են կիրառվելու տուժանքները՝ մեղմից դեպի խիստ: 8.2 Սահմանել այն բոլոր դեպքերը, երբ կիրառման է ենթական առավել խիստ տուժանքերը:	Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է: Ներկայացվում է համապատասխան մեկնաբանություն: Ընդունվել է:	Համապատասխան խմբագրումը կատարվել է: Կատարվել է Համապատասխան խմբագրում: Համապատասխան խմբագրումը կատարվել է: Համապատասխան խմբագրումը կատարվել է: Մասնավոր կառավարման պայմանագրով ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցումը կարող է իրականացվել այնպիսի ձևով, որը թույլ կտա մասնավոր կառավարչին նաև գույքի տնօրինման լիազորություն: Միաժամանակ մասնավոր կառավարում հասկացությունը սահմանված է ՀՀ ջրային օրենսգրքով: Համապատասխան խմբագրումը կատարվել է:

		8.3 Հստակ սահմանել այն խախտումները, որոնց կատարման համար պետք է սահմանվի նախազգուշացումը որպես տուժանք: Սահմանել, որ նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տրված խախտումը Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում վերացնելու կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական, որի կատարումը պարտադիր է:	Ներկայացվում է համապատասխան մեկնաբանություն:	
		8.4 Առաձին հոդվածներին և դրանց մասերին հղում կատարելով՝ սահմանել, թե ո՞ր խախտման դեպքում ինչ պատասխանատվության միջոց է կիրառվելու՝ նախազգուշացում, տուգանք, լիցենզիայի գործողության կասեցում, թե լիցենզիայի գործողության դադարեցում:		Նշված հարաբերությունները կարգավորվում են <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքներով:
		9. Նախագծով լրացվող 5.1 գլխի 47.1 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում <<լիցենզիայից զրկում>> բառերը փոխարինել <<լիցենզիայի գործողության դադարեցում>> բառերով, միաժամանակ սահմանել այն դեպքերը, երբ Հանձնաժողովը դադարեցնում է լիցենզիայի գործողությունը, ինչպես <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածում:		
		10. Նախագծով լրացվող 5.1 գլխի 47.1 հոդվածը լրացնել նոր 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ .		
		<<5. Լիցենզավորված անձն իրավունք ունի հանձնաժողովի նիստում, որտեղ քննարկվու է իր նկատմամբ տուժանք կիրառելու հարցը, արտահայտել իր կարծիքը, ներկայացնել առաջարկություններ և առարկություններ անձամբ կամ իր ներկայացուցչի միջոցով:>>:	Ընդունվել է:	
				Համապատասխան խմբագրումը կատարվել է: Միաժամանակ նշված խնդիրների կարգավորումը նախատեսված է <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով:
			Ընդունվել է:	
				Համապատասխան խմբագրումը կատարվել է:

3.	ՀՀ կառավարություն	<<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի <<15-րդ և 37-րդ>> պարբերությունները>> բառերը խմբագրել <<14-րդ և 36-րդ պարբերություններ>> բառերով:		Համապատասխան խմբագրումը կատարվել է: